ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՀՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊՐԱՀՈՍԼԱՒ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ.

Մայիսի 21-ին լրացաւ Կ. պ. Պ. ընկերութեան 25 ամեակը։ Սորա հիմնադիրն էր Մեծ Իշխան Սերկէյ Ալեքսանդրովիչը։ Այս ընկերութեան նպատակը զուտ բարոյական-կրօնական է. 1) Պրաւոսլաւութիւնը պահպանել Ս. երկրում. 2) Ռուս ուխտաւորներին աջակցութիւն ցոյց տալ. 3) Ս. երկրի անցեալն ու ներկան ուսումնասիրել. 4) Ս. երկրի մասին թէ գիտական և թէ ժողովրդական գրուածքներ տպագրել։ Ընկերութեան գործունէութեան արդիւնքն է եղել.

1) Պաղեստինում և Ասորիքում շինել կամ նորոգել է շատ եկեղեցիներ։

2) Դրամական օգնութիւն տուել խեղճ ժողովրդին (պրաւոսլաւ) իրենց տաճարները պահպանելու կամ նորոգելու համար, նոյնպէս՝ եկեղեցական կահ-կարասիք և հանդերձանք։

3) Դրամական օգնութիւն՝ Երուսաղիմի և Անտեոքի պատրիարքներին. նոյնը և Պաղեստինի հոգևորականներին։

4) Հիմնել են 101 ուսմ. հաստատութիւններ, ուր սովորում են 10,000 մանուկներ։ Յիշեալ ուսումնարաններից 48 միգասեան դպրոցներ են և 2 ուսուցչական դպրանոցներ։

5) Ռուսաստանում՝ Կիևում՝ հոգևոր սեմինարիայում և և Ճեմարանում պահում է որդեգիրներ. նոյնպէս դրամական օգնութիւն հասցնում Ասորիքի այն տեղացիներին, որոնք գալիս են Ռուսաստան՝ ուսման։

6) Ասորիքում և Պաղեստինում բաց է արել դեղատներ և հիւանդանոցներ։

7. Ցատուկ հոգատարութիւն և ամէն տեսակ օգնութիւն ընձեռել է Ս. երկիրը ուխտ գնացողներին։

8) Կատարել է պեղումներ և գիտական ճանապարհորդութիւններ և նոցա արդիւնքը հրատարակել՝ թէ գրքեր և թէ կարտեզներ և մի յատուկ ամսաթերթ է պահում ամբողջովին նուիրուած Պաղեստինին և այնտեղի սրբավայրերին։

Այս բոլոր ծախքերը յօժարակամ նուիրաբերութեամբ են ծածկուում։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Կիպրոսը Անգղիական կառավարութեան ձեռքը անցնելով՝ Կիպրոսի խորհրդի ձեռն է անցել և եկեղեցու արքեպիսկոպոսի ընտրութեան իրաւունքը։ Խորհրդի անդամներ են տեղական յոյն, թիւրք և անգղիացի ներկայացուցիչները. իսկ Սինոդը և հոգևորականութիւնը բոլորովին զուրկ է այս հարցում ձայնի իրաւունքից։ Այս անկանոն ձևը պահուել էր մինչև վերջին ժամանակները, միայն անցեալներս հնարաւոր եղաւ վերացնել, այս հակաեկեղեցական ընտրութիւնը, ուր մահմեդական թիւրքը իրաւունք և ձայն ունէր, իսկ Սինոդը՝ ոչ, շնորհիւ Ցունաց Կ. Պոլսոյ պատրիարք Յովակիմի եռանդուն միջամտութեան։ Սա հրաւէր կարդաց Աղեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի Օրդոքս պատրիարքներին, ուղարկել իրենց էկզարխները Կիպրոս, նոր պատրիարքի ընտրութեան գործը կարգաւորելու ու Սինոդի և ժողովրդի հետ նոր պատրիարք ընտրելու։ Ս. Պ. Յովակիմը նախապէս գրել և Կղզու Նահանգապետի թոյլտուութիւնը ստացել էր։ Այսպիսով երկարատև անկանոնութիւնից յետոյ Կիպրոսը կրկին կստանայ իւր եկեղեցու կանոնական իրաւունքները։ Այս յոյսը աւելի արդարանում է այն միաշունչ գործակցութեամբ, որովհետև Աղեքսանդրիայի, Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքները պատրաստակամութիւն են յայտնել Յովակիմ պատրիարքին հեռագրով։

Կ. Պոլսի պատր. կողմից պատգամաւոր է ընտրուել Անքիալի մետրոպոլիտ Բարսեղը։

ԲԱՐՈՅԱԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐ

Նաւտով կրթութեան գործը հիմնովին փոփոխութեան կենթարկուի. իսկ դպրոցական խնդիրների մէջ բարոյակրթական գործը առաջին տեղը պիտի ընդունէ։ Ահա մօտիկ ապագայում այս լինելիք փոփոխութիւնները աչքի առաջ ունենալով՝ Ս. Պետերբուրգի «Ծնողաց ժողովը» այս դպրոցական տարուայ վերջին մի շարք նոտեր նուիրելով՝ մշակել է կրօնական բարոյական դաստիարակութեան վերաբերեալ մի կարգ հարցեր և